ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

2023Թ. ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1
2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ 5
3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ 7
   3.1. Բյուջեի ծախսերը ծրագրային դասակարգմամբ 10
4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ 13
5. ԱՄՓՈՓՈՒՄ 15

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ռուս-ուկրաինական հակամարտությամբ պայմանավորված մարտահրավերները շարունակում են վճռորոշ ազդեցություն ունենալ համաշխարհային տնտեսության վրա: Այնուամենայնիվ, այդ ազդեցությունը 2023 թվականի առաջին կիսամյակում որոշ չափով թուլացել է: Այդ ֆոնին, համաշխարհային մատակարարման շղթաների աստիճանական վերականգնման, Չինաստանի տնտեսության վերականգնման, ինչպես նաև կենտրոնական բանկերի կողմից կիրառվող զսպող դրամավարկային քաղաքականության արդյունքում ՀՀ հիմնական գործընկեր երկրներում շարունակվել են գրանցվել տնտեսական աճեր, որոնք, ճիշտ է, դեռևս ցածր են ներուժային աճի տեմպերից, սակայն որոշակիորեն արագանում են, իսկ ՌԴ-ում չորս եռամսյակ շարունակվող անկումից հետո 2023 թվականի ապրիլ ամսից շարունակաբար գրանցվում է տնտեսական աճ: Այս պատկերին զուգահեռ, ՀՀ հիմնական գործընկեր երկրներում արձանագրվել է գնաճային ճնշումների թուլացում:

Համաշխարհային շուկայում առկա մարտահրավերները, ինչպես նաև հիմնական գործընկեր երկրներում արձանագրված գործընթացները, բնականաբար, իրենց ազդեցությունն են ունեցել ՀՀ տնտեսության վրա: Այնուամենայնիվ, ի տարբերություն այդ երկրների, մեր երկրի տնտեսության վրա ռուս-ուկրաինական զինված հակամարտության բարենպաստ ազդեցությունը գերազանցել է դրանց բացասական ներգործությանը՝ պայմանավորված ՌԴ-ից դեպի Հայաստան մարդկանց և կապիտալի աննախադեպ ներհոսքով, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ռուսաստանյան և բելառուսական բազմաթիվ ընկերությունների՝ ՀՀ տեղափոխմամբ, ինչպես նաև պատժամիջոցների հետևանքով շատ երկրներից ՌԴ ներմուծման սահմանափակումների պատճառով ՀՀ-ից դեպի Ռուսաստան արտահանման ավելացմամբ: Արդյունքում, 2023թ. հունվար-հունիս ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գրանցվել է տնտեսական ակտիվության ցուցանիշի (ՏԱՑ) 11.4% աճ: Իսկ 12-ամսյա աճը 2023թ. հունիսին մայիսի համեմատ կրկնակի դանդաղելով կազմել է 6.8%: Տնտեսական ակտիվության կուտակային աճը հիմնականում պայմանավորված է եղել ծառայությունների աճով (նպաստումը՝ 5.5 տոկոսային կետ)[1]:

2023 թվականի առաջին կիսամյակում *արդյունաբերության* թողարկման աճը կազմել է 1.0% և հիմնականում պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության

[1] Աղբյուրը՝ Պետական բյուջեի 2023 թվականի առաջին կիսամյակի հաշվետվություն, https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun_2023_t1-in_kisamyak_, այցելվել է 24.09.2023թ.

աճով (նպաստումը՝ 2.6 տոկոսային կետ): Մինչդեռ, «հանքագործական արդյունաբերություն և բացհանքերի շահագործում» ենթաճյուղում անկումը շարունակվել է՝ 1.7 տոկոսային կետի բացասական նպաստում ունենալով ընդհանուր արդյունաբերության աճին:

ՌԴ ներմուծման շուկաների սահմանափակումները շարունակել են նպաստել ՀՀ-ից դեպի ՌԴ մշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման ավելացմանը: Բացի այդ, ծառայությունների և շինարարության ոլորտներում արձանագրված աճն ավելացրել է մշակող արդյունաբերության որոշ տեսակների նկատմամբ պահանջարկը: Մշակող արդյունաբերության ենթաճյուղի աճը հիմնականում պայմանավորված է եղել այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների (նպաստումը՝ 2.8 տոկոսային կետ), ծխախոտային արտադրատեսակների (նպաստումը՝ 1.4 տոկոսային կետ), պոլիգրաֆիական գործունեության (նպաստումը՝ 1.4 տոկոսային կետ), ինչպես նաև ոսկերչական արտադրատեսակների (նպաստումը՝ 1.2 տոկոսային կետ) արտադրության ծավալների աճով:

Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության համախառն արտադրանքն աճել է 1.6%-ով՝ պայմանավորված բուսաբուծության աճով (նպաստումը՝ 3.9 տոկոսային կետ): Անասնաբուծությունն ընդհակառակը՝ նվազել է՝ 2.1 տոկոսային կետով հակազդելով ճյուղի աճին:

Շինարարության ճյուղում գրանցված 17% աճն առավելապես պայմանավորված է եղել կազմակերպությունների միջոցներով իրականացված շինարարության ծավալների ավելացմամբ (նպաստումը՝ 22.2 տոկոսային կետ), որին նպաստել են հիպոթեքային վարկերի տոկոսների՝ եկամտահարկից վերադարձման պետական աջակցության ծրագրի գործունեության սահմանափակումների կիրառումը և օտարերկրյա քաղաքացիների մեծ ներհոսքի պայմաններում բնակարանային շուկայում պահանջարկի աճը: Պետական բյուջեի միջոցներով ֆինանսավորվող շինարարության ծավալները, ընդհակառակը, նվազել են՝ շինարարության ընդհանուր աճին հակազդելով 7.2 տոկոսային կետով:

Ծառայությունների 16.8%-ով աճը հիմնականում պայմանավորված է «տեղեկատվություն և կապ» (նպաստումը՝ 9.7 տոկոսային կետ), «տրանսպորտ» (նպաստումը՝ 4.1 տոկոսային կետ), ինչպես նաև «կացության և հանրային սննդի կազմակերպում» (նպաստումը՝ 2.2 տոկոսային կետ) ենթաճյուղերի աճերով: Ճյուղի աճի վրա բացասաբար է ազդել «ֆինանսական և ապահովագրական

գործունեություն» ենթաճյուղում արձանագրված նվազումը (նպաստումը՝ -1.1 տոկոսային կետ)՝ պայմանավորված հունիս ամսին ենթաճյուղի 30.3% նվազմամբ:

Ծառայությունների որոշ տեսակների և առևտրի վրա զգալի դրական ազդեցություն է ունեցել զբոսաշրջիկների այցելությունների բարձր՝ 2023 թվականի առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ 70.3%-ով աճը:

2023 թվականի առաջին կիսամյակում *առևտրի* 23.6% աճն առավելապես պայմանավորված է մեծածախ առևտրի աճով (նպաստումը՝ 19.2 տոկոսային կետ), որն իր հերթին հիմնականում բացատրվում է տնտեսության մյուս հատվածներում առկա բարձր պահանջարկով, ինչպես նաև ազգային արժույթի արժեզրկման սպասումների հետևանքով տնտեսավարողների կողմից ներմուծված ապրանքների պաշարների կուտակմամբ:

Զուտ արտահանման մասով նշենք, որ ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալների աճը 2023թ. առաջին եռամսյակի համեմատ զգալիորեն դանդաղել է՝ կազմելով 56.4%՝ առաջին եռամսյակի 77.4%-ի դիմաց: Մինչդեռ, ապրանքների և ծառայությունների ներմուծման ծավալները 2023թ. առաջին եռամսյակի 47.4%-ի համեմատ նույնիսկ փոքրիկ աճ են ունեցել՝ կազմելով 48.0%: Ներմուծման աճին զգալի դրական նպաստում է ունեցել արժևորված ազգային արժույթը:

Տնտեսական բարձր ակտիվության պայմաններում առաջին կիսամյակում վարձու աշխատողների թիվը և աշխատավարձերն աճել են: Միջին ամսական անվանական աշխատավարձը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 19.5%-ով՝ կազմելով 261,376 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է 9.2%-ով՝ կազմելով 192,109 դրամ, իսկ ոչ պետականում՝ 22.1%-ով և կազմել 290,141 դրամ: Նկատի ունենալով նշված ժամանակաշրջանում արձանագրված 4.2% գնաճը՝ ստացվում է, որ իրական աշխատավարձը 2022 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 14.7%-ով: Պետական և ոչ պետական հատվածներում իրական աշխատավարձի աճի տեմպը կազմել է համապատասխանաբար՝ 4.8% և 17.2%:

2023թ. հունիսին գնաճը մտել է բացասական տիրույթ: 2022 թվականին և 2023-ի սկզբին արձանագրված բարձր գնաճի տեմպը կտրուկ դանդաղել է՝ հունիսին կազմելով -0.5%: ՀՀ կենտրոնական բանկը հունիսին վերաֆինանսավորման

տոկոսադրույքը նվազեցրել է 0.25 տոկոսային կետով և սահմանել այն 10.5% (վերաֆինանսավորման տոկոսադրույքը ևս 0.25 տոկոսային կետով նվազեցվեց օգոստոսի 1-ին): Չնայած այդպիսի պահպանողական կեցվածքը հիմնավորվում է նրանով, որ տնտեսությունում բարձր պահանջարկը, աշխատավարձերի աճի բարձր տեմպերն ու գնաճային սպասումները պահպանվում են, այնուամենայնիվ, մտահոգություն կա, որ թիրախից էապես ցածր գնաճի արձանագրման պատճառներից մեկը գնաճը զսպելու նպատակով 2022-2023 թվականների ընթացքում ԿԲ-ի վարած քաղաքականության չափից ավելի ագրեսիվ լինելն է: Գնաճի տեմպերի զգալի դանդաղումը պայմանավորված է նաև արտաքին հատվածից գնաճային ճնշումների թուլացմամբ, դրամի արժևորմամբ, ինչպես նաև նախորդ տարվա գների բարձր բազայի գործոնով:

Վերաֆինանսավորման տոկոսադրույքի նվազեցումը, գնաճի արագ տեմպերով նվազումը և քաղաքականության հետագա մեղմացման սպասումները հանգեցրել են պետական պարտատոմսերի տոկոսադրույքների՝ տարեսկզբի համեմատ որոշակի նվազման: Մինչդեռ, վարկերի և ավանդների տոկոսադրույքներն էական փոփոխություններ չեն կրել:

Արտաքին առևտրի ցուցանիշներում հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է դոլարային արտահայտությամբ արտահանման և ներմուծման բավական բարձր աճ՝ արտահանումն աճել է 72.8%-ով՝ կազմելով 3,266.6 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 73%-ով՝ կազմելով 5,633.1 մլն ԱՄՆ դոլար: Այնուամենայնիվ, 2023 թվականի առաջին եռամսյակի համեմատ թե՛ արտահանման, թե՛ ներմուծման աճը դանդաղել է (առաջին եռամսյակի արդյունքներով արտահանումը և ներմուծումն աճել էին համապատասխանաբար 2.3 անգամ և 89.1%-ով):

2023 թվականի առաջին կիսամյակում ապրանքների գծով արտաքին առևտրի բացասական մնացորդը նախորդ տարվա նկատմամբ խորացել է (73.2%-ով) և կազմել -2,366.4 մլն ԱՄՆ դոլար:

Դրամական փոխանցումների զուտ ներհոսքը 2023 թվականի առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 9.7%-ով և կազմել 897.7 մլն դոլար:

Ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով ձևավորված, ՀՀ տնտեսության վրա դրական ազդեցություն ունեցող գործոնների շնորհիվ ՀՀ-ում արձանագրվել է ՏԱՑ-ի բավական բարձր աճ: **Այնուամենայնիվ, նշենք, որ աճի**

տեմպերը էապես դանդաղում են: Մասնավորապես, 2023 թվականի հունիս ամսին ՏԱՑ-ը մոտավորապես կրկնակի նվազել է և կազմել 6.8%՝ մայիսի 13.6%-ի դիմաց: Տնտեսական աճը ևս դանդաղել է. առաջին եռամսյակի համեմատ աճի տեմպը 2023թ. երկրորդ եռամսյակում նվազել է 3.0 տոկոսային կետով և կազմել 9.1%: Իսկ 2023թ. առաջին կիսամյակի աճի տեմպը՝ 10.5% է՝ 2.1 տոկոսային կետով ցածր 2022 թվականի տարեկան տնտեսական աճի տեմպից: Նկատի ունենալով վերոհիշյալը, ինչպես նաև վերջին շրջանում արձանագրվող որոշակի միտումները, անհիմն հոռետեսություն չէ ակնկալելը, որ առաջիկայում կարող է արձանագրվել տնտեսական ակտիվության նվազում, ինչը, բնականաբար, նաև ենթադրում է 2023 թվականի համար տնտեսական աճի բավական համեստ տեմպեր: Այս տեսակետը կիսում են նաև այնպիսի միջազգային կազմակերպություններ, ինչպիսիք են՝ Համաշխարհային բանկը (այս կազմակերպության կողմից կանխատեսվել է ՀՀ 2023թ. տնտեսական աճի 4.5% տեմպ), Արժույթի միջազգային հիմնադրամը (տնտեսական աճի կանխատեսվող տեմպը՝ 5.5%), Ասիական զարգացման բանկը (կանխատեսվող տեմպը՝ 6.5%) և Եվրասիական զարգացման բանկը (կանխատեսվող տեմպը՝ 7.5%): ՀՀ կենտրոնական բանկը ևս կանխատեսում է նախորդ տարվա տնտեսական աճի 12.6% տեմպի համեմատ բավական համեստ 6.9% աճ:

2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

ՀՀ պետական բյուջեի եկամուտների աճի տեմպը 2023 թվականի առաջին կիսամյակում շարունակել է մնալ բարձր: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են 1160.7 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից 18.1%-ով ավելի: Նշված գումարից շուրջ 1,156.6 մլրդ դրամը կազմել են ներքին աղբյուրներից ստացված եկամուտները՝ ապահովելով ծրագրի 105.5%-ը, իսկ 4.1 մլրդ դրամը ստացվել է պաշտոնական դրամաշնորհների տեսքով: Պաշտոնական դրամաշնորհների գծով բյուջեի մուտքերը ճշտված պլանով նախատեսվածից (8.5 մլրդ դրամ) պակաս են 52.0%-ով և 6.6%-ով զիջում են նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշին: Հարկերը և տուրքերը կազմել են 1103.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 18.9%-ով: Ընդ որում, չնայած առաջին կիսամյակի տնտեսական ակտիվությանը, հարկերի հավաքագրման աճի տեմպերը դանդաղել են՝ եկամտային հարկի դրույքաչափի նվազման և վերադարձի ծավալների աճի, ինչպես նաև մետաղական հանքանյութերի նկատմամբ արտահանման տուրքի գործողության դադարեցման պատճառով: Հարկային եկամուտների աճն առավելապես պայմանավորված է բարձր տնտեսական աճի պայմաններում հարկման բազաների աճով:

2022 թվականի առաջին կիսամյակի համեմատ 2023 թվականի առաջին կիսամյակում բյուջեի եկամուտներում 0.7 տոկոսային կետով ավելացել է հարկային եկամուտների և պետական տուրքերի տեսակարար կշիռը, իսկ այլ եկամուտների և պաշտոնական դրամաշնորհների տեսակարար կշիռները նվազել են համապատասխանաբար 0.6 և 0.1 տոկոսային կետով:

Հարկային եկամուտների և պետական տուրքերի ընդհանուր ծավալում առավել մեծ տեսակարար կշիռ են կազմում ավելացված արժեքի հարկը՝ 31.3%, եկամտային հարկը՝ 24.5% և շահութահարկը՝ 21.4%: Հարկային եկամուտների աճը ևս հիմնականում պայմանավորված է այդ հարկատեսակներով (շահութահարկի աճը՝ 44.9%, ավելացված արժեքի հարկինը՝ 20.1%, եկամտային հարկինը՝ 18.9%):

2023թ. առաջին կիսամյակում պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են շուրջ 53.1 մլրդ դրամ և 53.7%-ով գերազանցել են առաջին կիսամյակի ծրագրված ցուցանիշին, ինչը հիմնականում պայմանավորված է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից ու դեպոզիտներից ստացված տոկոսավճարների, ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից ստացված մուտքերի և իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերի՝ կիսամյակային ծրագրային ցուցանիշներից ավելի լինելով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտները աճել են 2.6 մլրդ դրամով կամ 5.2%-ով:

Աղյուսակ 1. Պետական բյուջեի եկամուտները, մլրդ դրամ

	2022թ.	2023թ.			
	Առաջին կիսամյակի փաստացի	Առաջին կիսամյակի պլան	Առաջին կիսամյակի ճշտված պլան	Առաջին կիսամյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը եկամուտներ, այդ թվում՝	**982.8**	**1,096.2**	**1,104.6**	**1,160.7**	**105.1**
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	927.9	1,054.0	1,061.5	1,103.5	104.0

Պաշտոնական դրամաշնորհներ	4.4	8.0	8.5	4.1	48.0
Այլ եկամուտներ	50.5	34.2	34.5	53.1	153.7

3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

2023 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեի փաստացի ծախսերն աճել են, սակայն ծրագրվածի համեմատ թերակատարումը թե՛ բացարձակ մեծությամբ և թե՛ տոկոսային արտահայտությամբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է: 2023 թվականի առաջին կիսամյակում պետական բյուջեի փաստացի ծախսերը (1,026.4 մլրդ դրամ) ճշտված ծրագրով նախատեսվող ցուցանիշի համեմատ թերակատարվել են 16.6%-ով՝ 203.7 մլրդ դրամով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի պետական բյուջեի ծախսերի 15.2% կամ 163.3 մլրդ դրամի թերակատարման դիմաց: Ճշտված պլանից 203.7 մլրդ դրամով շեղումը 48.6%-ով ընթացիկ ծախսերի և 51.4%-ով ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների թերակատարման արդյունք է:

Աղյուսակ 2. Պետական բյուջեի ծախսերը, մլրդ դրամ

	2022թ.	2023թ.			
	Առաջին կիսամյակի փաստացի	Առաջին կիսամյակի պլան	Առաջին կիսամյակի ճշտված պլան	Առաջին կիսամյակի փաստացի	Կատարող-ականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը ծախսեր, այդ թվում՝	**910.3**	**1,189.3**	**1,230.1**	**1,026.4**	**83.4**
Ընթացիկ ծախսեր	813.3	974.3	1,011.0	911.9	90.2
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	97.0	214.9	219.1	114.5	52.3

Նշված ժամանակահատվածում ընթացիկ ծախսերը կազմել են 911.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 12.1%-ով: Դրանք ճշտված պլանի համեմատ թերակատարվել են 9.8%-ով կամ 99.1 մլրդ դրամով: Ընդ որում, **թերակատարումներ արձանագրվել են ընթացիկ ծախսերի բոլոր բաղադրիչների գծով**:

Աղյուսակ 3. Պետական բյուջեի ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման, մլրդ դրամ

	2022թ.	2023թ.		
	Առաջին կիսամյակի փաստացի	Առաջին կիսամյակի ճշտված պլան	Առաջին կիսամյակի փաստացի	Կատարո-ղականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը ծախսեր	**910.3**	**1,230.1**	**1,026.4**	**83.4**
Ընթացիկ ծախսեր	813.3	1,011.0	911.9	90.2
Աշխատանքի վարձատրություն	*82.0*	*95.2*	*90.1*	*94.7*
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	*68.2*	*95.9*	*77.9*	*81.3*
Տոկոսավճարներ	*96.9*	*129.3*	*116.5*	*90.1*
Սուբսիդիաներ	*66.4*	*74.4*	*69.0*	*92.7*
Դրամաշնորհներ	*97.0*	*142.1*	*120.9*	*85.1*
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	*286.6*	*334.7*	*325.1*	*97.1*
Այլ ծախսեր	*116.2*	*139.5*	*112.4*	*80.6*
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	**97.1**	**219.1**	**114.5**	**52.3**
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	**100.6**	**222.2**	**116.9**	**52.6**
Շենքեր և շինություններ	*84.9*	*193.9*	*105.1*	*54.2*
Մեքենաների և սարքավորումների ձեռքբերում, պահպանում և հիմնանորոգում	*14.0*	*23.5*	*9.8*	*41.8*
Այլ հիմնական միջոցներ	*1.7*	*4.6*	*2.0*	*42.9*
Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր	**(3.6)**	**(3.1)**	**(2.4)**	**79.9**

Ընթացիկ ծախսերի կազմում զգալի է «ծառայությունների և ապրանքների ձեռքբերում» հոդվածի գծով արձանագրված թերակատարումը՝ ճշտված պլանի համեմատ 18.7% կամ՝ 18.0 մլրդ դրամ:

Ճշտված պլանով նախատեսվող ցուցանիշից 21.2 մլրդ դրամով կամ 14.9%-ով պակաս են կատարվել «դրամաշնորհներ» հոդվածի գծով սահմանված ծախսերը:

Ամենամեծ թերակատարումը՝ 19.4%, արձանագրվել է «այլ ծախսեր» հոդվածի գծով: Այդ ծախսերը 2023թ. առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 3.2%-ով և կազմել 112.4 մլրդ դրամ,

մինչդեռ ճշտված պլանով նախատեսվում էր, որ դրանք պետք է աճեին 20.1%-ով և կազմեին 139.5 մլրդ դրամ:

Դրամաշնորհների գծով արձանագրված 21.2 մլրդ դրամ թերակատարումից 15.1 մլրդ դրամը պետական հատվածի այլ մակարդակներին տրվող դրամաշնորհների մասով է, ինչը վկայում է, որ կապիտալ ծախսերի կատարման մասով համայնքներում ևս առկա խնդիրները շարունակում են մնալ մտահոգիչ:

Կապիտալ ծախսերի արդեն «ավանդական» դարձած թերակատարումը 2023թ. առաջին կիսամյակում ավելի է մեծացել: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները[2] 2023թ. հունվար-հունիս ամիսներին կազմել են 114.5 մլրդ դրամ, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսերը)՝ 116.9 մլրդ դրամ՝ բյուջեի ճշտված պլանով նախատեսվածից 105.3 մլրդ դրամով կամ 47.4%-ով պակաս: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում կապիտալ ծախսերը պլանի համեմատ թերակատարվել են 40.7%.-ով, այսինքն՝ կատարողականը ոչ միայն չի բարելավվել, այլև նույնիսկ որոշ չափով վատթարացել է:

Կապիտալ ծախսերի՝ ծրագրից նման մեծ շեղումը զգալի չափով պայմանավորված է ՀՀ պաշտպանության նախարարության ծրագրերի գծով արձանագրված ցածր կատարողականով:

Աղյուսակ 4. Ներքին ռեսուրսների հաշվին ՀՀ պաշտպանության նախարարության ծրագրերով կատարված կապիտալ ծախսերը, մլրդ դրամ

	2022թ.	2023թ.		
	Առաջին կիսամյակի փաստացի	Առաջին կիսամյակի ճշտված պլան	Առաջին կիսամյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ներքին ռեսուրսների հաշվին իրականացվող ծրագրերում ՀՀ պաշտպանության նախարարության ծրագրերի գծով կատարված կապիտալ ծախսերը	61.5	133.4	78.6	58.9

[2] Կապիտալ ծախսերի (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի) և ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի տարբերությունն են:

Ընդհանրապես, կատարողականի ցածր ցուցանիշները ցույց են տալիս, որ կապիտալ ծրագրերի կառավարման և իրականացման խնդիրը շարունակում է մնալ չլուծված:

Կապիտալ ծախսերի՝ ծրագրից նման մեծ շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ պաշտպանության նախարարության շենքային պայմանների բարելավման և ռազմական կարիքների բավարարման միջոցառումների գծով նախատեսված ծախսերի թերակատարմամբ:

Կապիտալ ծախսերի՝ առաջին կիսամյակում արձանագրված թերակատարման միտումների պահպանման պարագայում, դրանք կթերակատարվեն նաև տարեկան կտրվածքով, իսկ 2023 թվականի պետական բյուջեով նախատեսված կտրուկ աճը կմնա պարզապես «չիրականացված բարի ցանկություն»:

3.1. Բյուջեի ծախսերը ծրագրային դասակարգմամբ

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեով առաջին կիսամյակում նախատեսված էր իրականացնել 169 ծրագրեր, 46-ը՝ պետական մարմինների և ՀՀ կառավարության պատասխանատվության ներքո: Կատարված ճշտումների արդյունքում նախատեսված ծրագրերի թիվը դարձվել է 172: Դրանցից առաջին կիսամյակում փաստացի միջոցներ են օգտագործվել 166-ի գծով: Ծրագրերի շրջանակներում առաջին կիսամյակում նախատեսված 928 միջոցառումներից (առանց ՀՀ կառավարության պատասխանատվությամբ նախատեսված 3 միջոցառումների) ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարվել են 797-ը կամ 85.9%-ը:

2023 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեի **ծախսերի կատարողականի ընդհանուր շեղումը կազմել է 203.7 մլրդ դրամ:** Այդ շեղման 39.5%-ը (80.4 մլրդ դրամը) պայմանավորված է ՀՀ պաշտպանության նախարարության, 14.3%-ը (29.2 մլրդ դրամը)՝ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, 10.4%-ը (21.2 մլրդ դրամը)՝ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, 6.6%-ը (13.5 մլրդ դրամը)՝ ֆինանսների նախարարության, 5.6%-ը (11.5 մլրդ դրամը)՝ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, 4.6%-ը (9.3 մլրդ դրամը)՝ ոստիկանության, 4.6%-ը (9.4 մլրդ դրամը)՝ առողջապահության նախարարության, 3.9%-ը (7.9 մլրդ դրամը)՝ էկոնոմիկայի նախարարության պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի թերի իրականացմամբ:

Աղյուսակ 5. ՀՀ պետական բյուջեի ծախսերն ըստ պատասխանատու մարմինների, մլրդ դրամ

	2022թ.	2023թ.		
	Առաջին կիսամյակի փաստացի	Առաջին կիսամյակի ճշտված պլան	Առաջին կիսամյակի փաստացի	Կատարո-ղականը ճշտված պլանի նկատմամբ, %
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**910.3**	**1,230.1**	**1,026.4**	**83.4**
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	72.4	110.2	81.0	73.5
ՀՀ առողջապահության նախարարություն	57.8	66.5	57.2	85.9
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	19.7	32.8	24.8	75.8
ՀՀ ԿԳՄՍ նախարարություն	85.7	109.2	88.0	80.6
ՀՀ պաշտպանության նախարարություն	156.7	261.9	181.5	69.3
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	287.6	338.5	327.0	96.6
ՀՀ ֆինանսների նախարարություն	98.3	131.4	117.9	89.7
ՀՀ ոստիկանություն	35.8	40.6	31.4	77.2
ՀՀ արդարադատության նախարարություն	8.8	10.7	10.1	93.8
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	3.9	19.2	14.9	77.3
ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	20.3	23.0	20.7	90.2
Այլ պետական մարմիններ	27.4	45.4	40.6	89.5

Ուշագրավ է, որ պաշտպանության նախարարությունն «առաջատար» է թե՛ ճշտված պլանից շեղման բացարձակ մեծության, թե՛ դրա համեմատ թերակատարման տոկոսային արտահայտության առումով: Որպես

պատասխանատու մարմին՝ պաշտպանության նախարարությունը ճշտված պլանով նախատեսված ծախսերը թերակատարել է 30.7%-ով: Այն առավելապես պայմանավորված է ՀՀ պաշտպանության ապահովման ծրագրով: Միայն այդ ծրագրի շրջանակներում օգտագործվել է 180.3 մլրդ դրամ (որը ներառված է Աղյուսակ 5-ում նշված 181.5 մլրդ դրամի մեջ) կամ նախատեսված միջոցների 69.8%-ը: Վերը նշված գումարներն ուղղվել են թվով հինգ միջոցառումների իրականացմանը:

Հաջորդ մեծ շեղումն արձանագրվել է տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պատասխանատվությամբ իրականացված ծրագրերի գծով՝ ընդհանուր ծախսերը կազմել են 81.0 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 73.5%-ը: Նախատեսված պլանից շեղումը հիմնականում պայմանավորված է Քաղաքային զարգացման, Ոռոգման համակարգի առողջացման, Ճանապարհային ցանցի բարելավման և Տարածքային զարգացման ծրագրերի կատարողականով: Ուշագրավ են այդ ծրագրերի վերաբերյալ հետևյալ փաստերը.

- Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի գծով թերակատարումն ամենամեծն է՝ 69.8%:
- Քաղաքային զարգացման ծրագիրը թերակատարվել է 63.2%-ով:
- Ոռոգման համակարգի առողջացման ծրագիրը թերակատարվել է 53.8%-ով:
- Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավման ծրագրի թերակատարումը 33.3% է:
- Ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի գծով թերակատարումը կազմել է 23%: Ընդ որում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ծրագրի շրջանակներում օգտագործվել են 14.0%-ով պակաս միջոցներ:
- Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագրի շրջանակներում չի օգտագործվել նախատեսված միջոցների 18.9%-ը:

Հարկ է ընդգծել, որ ծրագրերի իրականացման համար նախատեսված ծախսերի նման մեծ ծավալներով թերակատարումները խոսում են այն մասին, որ տնտեսության ներուժի տեսանկյունից կարևորագույն ծրագրերն ամբողջությամբ կամ մասամբ չեն իրականացվել, ինչը, բնականաբար, բացասաբար է ազդում ոչ միայն ընթացիկ, այլ նաև ապագա տնտեսական զարգացման վրա:

4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

ՀՀ պետական բյուջեն 2023թ. առաջին կիսամյակում կատարվել է 134.3 մլրդ դրամ հավելուրդով՝ ծրագրված 125.5 մլրդ դրամ պակասուրդի դիմաց: **Արդյունքում, բյուջեի կատարումը պլանից շեղվել է շուրջ 259.8 մլրդ դրամով:** Ի դեպ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում բյուջեի հավելուրդը 53.1 մլրդ դրամով ավելի փոքր էր:

Ակնհայտ է, որ կառավարությունը տնտեսությունից հավաքագրում է հարկերը, սակայն չի ծախսում՝ այդպիսով նվազեցնելով տնտեսական ակտիվությունը: Այդ իսկ պատճառով հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա եղել է զսպող: Հարկաբյուջետային քաղաքականությունը 2023 թվականի վեց ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ համախառն պահանջարկի վրա ունեցել է զսպող (-0.6) ազդեցություն: **Մինչդեռ ըստ 2023թ. պետական բյուջեի ուղերձի՝ 2023թ. նախատեսվում է իրականացնել չեզոք հարկաբյուջետային քաղաքականություն[3]:**

Աղյուսակ 6. Պետական բյուջեի պակասուրդը և ֆինանսավորման աղբյուրները, մլրդ դրամ

	2022թ.	2023թ.		
	Առաջին կիսամյակի փաստացի	Առաջին կիսամյակի ճշտված պլան	Առաջին կիսամյակի փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Բյուջեի պակասուրդը (+) / հավելուրդը (-)	**(72.4)**	**125.5**	**(134.3)**	**(107.0)**
Պակասուրդի ֆինանսավորումը՝				
Ա. Ներքին աղբյուրներ, *այդ թվում՝*	**19.3**	**175.5**	**(3.3)**	**(1.9)**
1. Փոխառու զուտ միջոցներ	*116.8*	*121.1*	*159.2*	*131.5*
2. Ֆինանսական զուտ ակտիվներ	*(97.5)*	*54.4*	*(162.5)*	*(298.7)*
Բ. Արտաքին աղբյուրներ, *այդ թվում՝*	**(91.7)**	**(50.0)**	**(131.0)**	**262.0**
1. Փոխառու զուտ միջոցներ	*(1.7)*	*55.6*	*(28.7)*	*(51.6)*
2.Ֆինանսական զուտ ակտիվներ	*(90.0)*	*(105.6)*	*(102.3)*	*96.9*

[3] ՀՀ կառավարության 2023 թվականի բյուջետային ուղերձ-բացատրագիր, էջ 70, https://minfin.am/website/images/website/2.Uxerdz_bacatragir%20(1).docx

Չնայած զգալի հավելուրդին՝ կառավարությունը շարունակել է ակտիվորեն ներգրավել ներքին պարտք: Ներքին զուտ փոխառու միջոցների (փոխառությունների և մարումների տարբերությունը) ծավալը կազմել է 159.2 մլրդ դրամ՝ պլանավորվածից 38.1 մլրդ դրամով ավելի, **այն դեպքում, երբ ներքին պարտքի սպասարկումը, բնականաբար, ավելի «թանկ» է: Առավել ևս, որ վերջին ամիսներին ՀՀ դրամը գրեթե շարունակաբար արժևորվել է:** Արտաքին փոխառու միջոցների գծով մարումները գերազանցել են մուտքերին, ինչի հաշվին արտաքին զուտ փոխառու միջոցների ծավալը բացասական է եղել՝ -28.7 մլրդ դրամ՝ ճշտված պլանի՝ 55.6 մլրդ դրամ դրական մեծության դիմաց: Նպատակային վարկերի գծով մուտքերը կազմել են ընդամենը 18.9 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի (107.8 մլրդ դրամ) 17.5%-ը: **Այսպիսի ցածր կատարողականը նպատակային (կապիտալ) ծրագրերի թերակատարման հետևանք է:**

2023 թվականի հունիսի 30-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 4,289.7 մլրդ դրամ (11,103.9 մլն ԱՄՆ դոլար), որի 95.1%-ը՝ 4,079.2 մլրդ դրամ (10,559.0 մլն ԱՄՆ դոլար), ՀՀ կառավարության պարտքն է: Նախորդ տարեվերջի համեմատ պետական պարտքի ցուցանիշները դրամային և դոլարային արտահայտությամբ աճել են անհամաչափորեն՝ համապատասխանաբար 2.5%-ով և 4.4%-ով: Դա պայմանավորված է եղել 2022 թվականի վերջի համեմատ ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքի ևս 1.8%-ով նվազմամբ:

2023թ. հունիսի վերջի դրությամբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ աճել է 11.8%-ով, իսկ դրամային արտահայտությամբ՝ 5.8%-ով: Կառավարության պարտքը նույն միտումներն է ունեցել՝ դոլարային արտահայտությամբ աճել է 12.5%-ով, իսկ դրամային արտահայտությամբ՝ 6.4%-ով: Նկատի ունենալով ՀՀ դրամի արժևորումը՝ առավել նպատակահարմար է դիտարկել դրամով արտահայտված ներքին պարտքը, որը 2023թ. հունիսի 30-ի դրությամբ 28.5%-ով գերազանցել է նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշին, և դոլարային արտահայտությամբ արտաքին պարտքը, որը նույն ժամանակահատվածում նվազել է 1.0%-ով: Ներքին պարտքի կշիռը ընդհանուր պարտքի պորտֆելում շարունակել է աճել՝ հունիսի վերջի դրությամբ հասնելով 44.2%-ի:

2023թ. հունիսին պետական պարտատոմսերի տոկոսադրույքները չնայած նախորդ ամսվա համեմատ սկսել են նվազման միտում դրսևորել, այնուամենայնիվ նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշների համեմատ մնում են զգալիորեն ավելի բարձր: Կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը (եկամտաբերությունը)

2023թ. հունիսին կազմել է 11.2%, որը նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշից բարձր է շուրջ 0.6 տոկոսային կետով: Նմանօրինակ պատկեր է նաև միջնաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքի մասով, որը նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշից բարձր է 0.2 տոկոսային կետով:

5. ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով արձանագրենք.

• ՀՀ տնտեսության վրա դրական ազդեցություն ունեցող, ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով ձևավորված գործոնների շնորհիվ ՀՀ-ում արձանագրվել է տնտեսական ակտիվության ցուցանիշի բարձր աճ: **Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ աճի տեմպերը էապես դանդաղում են: Մասնավորապես, 2023 թվականի հունիս ամսին տնտեսական ակտիվության ցուցանիշը մայիս ամսի համեմատ կրկնակի նվազել է: Տնտեսական աճը ևս դանդաղել է. աճի տեմպը 2023թ. երկրորդ եռամսյակում առաջին եռամսյակի համեմատ նվազել է 3.0 տոկոսային կետով և կազմել 9.1%, իսկ 2023թ. առաջին կիսամյակի աճի տեմպը կազմել է 10.5%, որը 2.1 տոկոսային կետով ցածր է 2022 թվականի տարեկան ցուցանիշից: Նկատի ունենալով վերոհիշյալը, ինչպես նաև վերջին շրջանում արձանագրվող որոշակի միտումները՝ չի բացառվում, որ առաջիկայում արձանագրվի աճի տեմպերի էական դանդաղում:** Այս տեսակետը կիսում են նաև մի շարք միջազգային կազմակերպություններ, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկը՝ համաձայն որոնց կանխատեսումների նախորդ տարվա բարձր տնտեսական աճի համեմատ այս տարի սպասվում է էապես ավելի համեստ աճ՝ տարբեր գնահատումներով 4.5-7.5%:

• **ՀՀ պետական բյուջեն 2023թ. առաջին կիսամյակում ունեցել է 134.3 մլրդ դրամ հավելուրդ՝ ծրագրված 125.5 մլրդ դրամ պակասուրդի դիմաց: Ի դեպ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում բյուջեի հավելուրդը 53.1 մլրդ դրամով ավելի փոքր էր: 2023թ. առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեի կատարումը պլանից շեղվել է շուրջ 259.8 մլրդ դրամով:** Սրա հիմնական պատճառը բյուջեի ծախսերի թերակատարումն է, ինչը նշանակում է, որ կառավարությունը տնտեսությունից հավաքագրում է հարկերը, սակայն չի ծախսում՝ այդպիսով նվազեցնելով տնտեսական ակտիվությունը: Մինչդեռ, ներքին պահանջարկի ներկայիս կտրուկ աճի պայմաններում էապես պետք է ավելացվեն առաջարկի աճին միտված միջոցառումների իրականացմանն ուղղված ծախսերը:

• Պետական բյուջեի ծախսերի շարունակական թերակատարումը մտահոգիչ է: Ծրագրվածի համեմատ թերակատարումը թե՛ բացարձակ մեծությամբ և թե՛ տոկոսային արտահայտությամբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է: Ընդ որում, թերակատարվել են թե՛ ընթացիկ և թե՛ կապիտալ ծախսերը: Կապիտալ ծախսերի ամենամեծ թերակատարումն արձանագրվել է ՀՀ պաշտպանության նախարարության պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի գծով:

• Կատարողականի ցածր ցուցանիշները ցույց են տալիս, որ կապիտալ ծրագրերի կառավարման և իրականացման խնդիրը շարունակում է մնալ չլուծված:

• 2023թ. առաջին կիսամյակում արձանագրված թերակատարման միտումների պահպանման պարագայում կապիտալ ծախսերը կթերակատարվեն նաև տարեկան կտրվածքով՝ թողնելով 2023 թվականի պետական բյուջեով նախատեսված ծախսերի կտրուկ աճը պարզապես «չիրականացված բարի ցանկություն»:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*